

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 29 » հոկտեմբերի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը գործում է որպես Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ԳՊՄԻ) կառուցվածքային ստորաբաժանում և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՄԻ-ի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.2 Բաժինը կարող է փոփոխել կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:
- 1.3 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

2. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

- 2.1. ԳՊՄԻ-ի հիմնական նպատակների և գործառույթների մասին տեղեկատվության տարածումը հասարակության լայն շրջաններում:
- 2.2. Բաժինը հանրությանն է ներկայացնում ինստիտուտի առաքելության, նպատակներին և գործունեությանը վերաբերող զանազան տեղեկատվություններ, որոնք միանգամայն համահունչ են ինստիտուտի ռեկտորի, ռեկտորատի կամ գիտական խորհրդի պաշտոնական տեսակետին:
- 2.3. ԶԼՄ-ների, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման և համագործակցության գործընթացի պլանավորում և կազմակերպում:
- 2.4. Լրատվամիջոցներում ինստիտուտի ընդհանուր գործունեությանը վերաբերվող հրապարակումների ու հեռարձակված նյութերի ուսումնասիրում և ներկայացում ինստիտուտի ղեկավարությանը՝ համապատասխան պարզաբանումներ ստանալու և արձագանքելու համար:
- 2.5. Բաժնի ռազմավարական ծրագրերի իրականացման և հետագա զարգացման նպատակով համագործակցում ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:
- 2.6. Ինստիտուտի մասին դրական հասարակական կարծիքի և բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում:
- 2.7. ԶԼՄ-ների միջոցով ինստիտուտում իրականացվող կարևորագույն ուսումնական, գիտական, մշակութային և սոցիալական միջոցառումների մասին տեղեկացում:
- 2.8. Նպաստել տեղեկատվության տարածմանը և հասարակության լայն շրջաններում դրա ձեռքբերման մատչելիությանը:
- 2.9. Մասնակցություն ինստիտուտի համացանցային կայքի զարգացմանը ուսանողների և կայքի այլ այցելուների համար օպերատիվ թարմացումների և առցանց հետադարձ կապի ապահովման և բարելավման նպատակով:
- 2.10. Սեփական լրատվամիջոցների գործունեության խթանում՝ հասարակության համար ինստիտուտի գործունեությունը թափանցիկ և հասանելի դարձնելու նպատակով:
- 2.11. Ուսանող-դասախոս թափանցիկ երկխոսություն ապահովելու համար հեռուստատարանավեճերի, թոք-շոուների, լրագրային քննարկումների պարբերաբար կազմակերպում:
- 2.12. Հեռուստաստուդիայի աշխատանքների խթանման, նյութատեխնիկական բազայի հարստացման և աշխատակիցների սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու համար կոմերցիոն գործունեության իրականացում՝ համապատասխան ծրագրերը համաձայնեցնելով ինստիտուտի ղեկավարության հետ:
- 2.13. Ինստիտուտի կրթական և խորհրդատվական լրացուցիչ ծառայությունների, գովազդի կազմակերպում սեփական բոլոր լրատվամիջոցների օգտագործմամբ:

3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 3.1. Բաժնի աշխատանքները համակարգում է գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորը:
- 3.2. Բաժինն իր մեջ ներառում է ինստիտուտի հեռուստաստուդիան, տպագիր միջոցները և դրանց պատկանող ենթակառուցվածքները:
- 3.3. Բաժնի հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը՝ բաժինը համակարգող պրոռեկտորի ներկայացմամբ:

4. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բաժնի վարիչն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- 4.1. բաժնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարում և աշխատանքների բաշխում,
- 4.2. հասարակայնության հետ կապերին և լրատվությանը վերաբերվող հարցերի ներկայացում գիտական խորհուրդում ու ռեկտորատում,
- 4.3. բաժնի խնդիրներին և գործունեության առնչվող ինստիտուտի ստորաբաժանումների կողմից տարվող աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- 4.4. ԶԼՄ-ներում ինստիտուտի միջոցառումների լուսաբանման համար մամլո հաղորդագրությունների մշակման և ներկայացման կազմակերպում,
- 4.5. ինստիտուտի ռազմավարությանն ու ընթացիկ ծրագրերին համապատասխան գովազդային-տեղեկատվական քաղաքականության մշակում և ներկայացում ինստիտուտի գիտական խորհրդին,
- 4.6. պատասխանատու է բաժնի աշխատանքների որակի, խնդիրների ու գործառնությունների կատարման համար և հաշվետու է (տարին մեկ անգամ) ինստիտուտի գիտական խորհրդի առջև:

5. ԲԱԺՆԻ ԳՈՒՑՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- 5.1. Ինստիտուտի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն ապահովվում է համապատասխան աշխատանքային տարածքով, գույքով և սարքավորումներով:
- 5.2. Բաժինն օգտվում է ինստիտուտի հեռուստաստուդիայի և տպագիր լրատվության նյութատեխնիկական միջոցներից:
- 5.3. Բաժնի ղեկավարն իրավաբանորեն պատասխանատու է բաժնին հատկացված գույքի և սարքավորումների համար: